№ 226 ՈՒՐԲԱԹ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 12 1901 ՈՒՐԲԱԹ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 12 № 226

ՔՍԱՆԻՆՆԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄՇԱԿ

ՀԻՄՆԱԴԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

Տարեկան գինը 10 բուբլի. կէս տարվան 6 բուբ.
Առանձին համարները 5 կոպէկով.

Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրատան մէջ.

Մեր հասցէն. Тифлисъ, Редакція «Мшакъ».
Կամ Tiflis, Rédaction «Mschak».
Տելեֆոն № 253.

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(բացի կիրակի եւ ազգ օրերից).

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով.

Յայտարարութիւնների համար վճարում են
իւրաքանչիւր ողտեղին 10 կոպէկ.
Տելեֆոն № 253.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Երկիրը գեղարուեստի մէջ.—ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Օպերային ներկայացումները. Նամակ Երեւանից. Նամակ Ալէքսանդրօպոլից. Նամակ Ղուբայից. Նամակ Խմբագրութեան. Ներքին լուրեր. — ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Արտաքին լուրեր.—ՀԵՌԱԳԻՐՆԵՐ.—ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ. — ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ. — Ցուցահանդէսը։

ԵՐԿԻՐԸ ԳԵՂԱՐՈՒԵՍՏԻ ՄԷՋ

Մենք յայտնեցինք մեր լրագրում, որ կիրակի, հոկտեմբերի 8-ին, Թիֆլիսում բացվեց գեղարուեստական դպրոց։ Այդ դպրոցը պէտք է հայթայթէ կանոնաւոր գեղարուեստական կրթութիւն իր աշակերտներին՝ զարգացնելով նրանց մէջ եղած գեղարուեստական ձիրքը և տալով տեխնիքական հմտութիւններ նրանց ձեռքը։

Թիֆլիսում գոյութիւն ունի վաղուց մի նկարչական ազատ դպրոց, որտեղ վարժվում են նկարչութեան և քանդակագործութեան արուեստների մէջ այն անձինք, որոնք կարող են նուիրել այդ արուեստին միայն մի քանի ազատ ժամեր շաբաթվայ մէջ, իսկ մնացած ժամանակը նրանք ըզբաղված են իրանց կրթութեամբ կամ պաշտօնավարութեամբ։ Երբ ժամանակի ընթացքում այդ անձինք ձեռք են բերում բաւականաչափ հմտութիւն, այն ժամանակ նրանք վստահանում են բոլորովին նուիրվել նկարչութեան կամ, իբրև սիրողներ, հանդէս հանել իրանց նկարները մեծ հասարակութեան առաջ։

Մենք կարծում ենք, որ գեղարուեստական դպրոցի երևալը չէ արգելում և չէ խանգարում, որ նախկին փոքրիկ դըպրոցը մնայ իբրև ազատ ուսանդիրների և ազատ աշխատողների դպրոց և առաջվայ պէս միջոց տայ գեղարուեստով զբաղվելու այն անձանց, որոնք չեն կարող իրանց բոլոր ժամանակը նուիրել արուեստին։ Նա լրացուցիչ կրթարանի դեր կը կատարէ գեղարուեստական հմտութիւնների տարածելու գործի մէջ մեր երկրում։

Մեր երկիրը վաղուց կարիք ունի գեղարուեստական կրթութեան։ Կովկասեան ներկայ ցուցահանդէսը և նախկին մասնաւոր նկարահանդէսները ցոյց են տալիս, որ մեր երկիրը իր հրաշալի բնութեամբ, իր բազմատեսակ ժողովուրդներով դեռ չէ գտել այնպիսի գեղարուեստական վարպետներ, որոնք կտաւի վրա ներկայացնէին մեր երկրի հազւադիւտ ճոխութիւնը իր հին կուլտուրայի մնացորդներով և ներկայի կեանքով։ Մինչև այժմ արածը միայն փորձեր են, որոնց մէջ աջողվածները դեռ բացառութիւն են։

Մեր երկիրը արժանի է գեղարուեստական աւելի լաւ և աջող արտայայտութեան։ Գեղարուեստական դպրոցները, տալով տեխնիքական վարժութիւններ, պէտք է նպաստեն այդ գործին։

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՕՊԵՐԱՅԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՄՆԵՐԸ

Ռուբինշտէյնի «Маккавей» (Մակաբայեցիներ) օպերան, որը գրեթէ առաջին անգամն է ներկայացնվում Թիֆլիսի բեմի վրա, չորեքշաբթի օր, ամսիս 10-ին, մեծ աջողութիւն ունեցաւ. թատրոնը գրեթէ լիքն էր։ Նիւթը առնըված է ս. գրքի պատմութիւնից եւ անցքը պատահում է 160 տարի Ք. ա.։ Դերերը յարմար էին բաժանված։ Անտիոք թագաւոր—Սիբիրեակով, Կլէօպատրէ, նրա դուստրը—Բենէ—Բաղինա, Գէօրգի զօրապետ—Գերասիմենկո, Լիա—Պոպովա, Ցուդա եւ Ելիազար՝ նրա որդիքը—Մակաակով եւ Բօրիսենկո, Նօէմա, Ցուդայի կին—Ասատուրով, Ցովակիմ քահանայ—Գօրեայինով։ Ութ գլխաւոր դերեր եւ այլ երկրորդականներ, ժողովուրդ, քահանաներ, տղաներ, մանկաւարիներ, սիրիական զօրքեր, յունաց գերիներ եւ հայրենիք ու կրօն պաշտպանող կամաւորներ։ Չը նայած այս ահագին բազմութեան՝ պիեսան լաւ անցաւ։

Ամբողջ օպերան հիմնված է Ցուդայի եւ նրա ժօր Լիայի վրա եւ պտտվում է նրանց շուրջը. առաջինը՝ Ցուդան ոչ միայն չէ կատարում բռնաւոր Անտիոքի հրամանը, այլ եւ կուռքին խոնարհող իր աներոջ սպանում է եւ կուռքն էլ բազմութեան առաջ ջարդում, իսկ երկրորդը՝ Լիան գերադասում է խայրոյկի վրա այրվել որդոց հետ, քան թէ կուռքին երկրպագել։ Լիայի դերը մեծ եւ շատ դժուար դեր է, որը Պոպովան այնքան եռանդով, ոյժով եւ գեղեցիկ տալաւ, որ աւելին չէ կարելի ցանկալ։ Նա երգում էր մեծ ոգեւորութեամբ, մի եւ նոյն ժամանակ համապատասխան խաղով. բոլոր տեսարանները, վէճերը, կատաղութիւն, յուզմունք, գգուանք, մայրական գութ եւ այլ զգացմունքներ, որոնցով լի է դերը, մի առանձին յստակութեամբ կատարեց յարգելի արտիստուհին այս օպերայում։ Զայնը սկզբից մինչեւ վերջ հիանալի էր հնչում։

Ցուդայի դերը աւելի եւս մեծ եւ պատասխանատու է։ Եթէ Մակաակովը չը լինէր կատարողը, հազիւ թէ ուրիշը կարողանար տանել նրան մեզանում։ Նա կատարելապէս իր դերումն էր։ Նա զարմանալի հմտութեամբ եւ զգացմունքով խաղում եւ երգում էր ամեն մի կըտոր, ամեն մի կէտ, եւ ձայնը միակերպ տիրապետում էր զօրեղ, պայծառ եւ ազդու հընչողութեամբ։

«Մակաբայեցիները» դժուար օպերա է։

Կարա-Մուրզա

ՆԱՄԱԿ ԵՐԵՒԱՆԻՑ

Հոկտեմբերի 6-ին

Վերջ ի վերջոյ ջրի հարցը լուծում ստացաւ։ այն էլ այն ժամանակ, երբ համարեա փակված էր համարվում, երկար ու ձիգ ամիսների ժողովներից, վէճերից եւ ունայն բանակցութիւններից յետոյ։

Ընթերցողները, երեւի, յիշում են Երեւանի քաղաքային վարչութեան բանակցութիւնների ապարդիւն հետեւանքը ինժէներ Միխայլովի հետ։ Միխայլով կօնցեսիայի համար պահանջում էր 40 տարի ժամանակամիջոց եւ քաղաքի ջրերի անպայման փակումն ձմեռվայ ամիսների ընթացքում, իսկ քաղաքը չը համաձայնեց այդ բանին, 40 տարին փոխելով 36-ի եւ առուների փակելը անկարելի գտնելով։ Միխայլով հեռացաւ կօնցեսիայից, չը նայած երկար բանակցութիւններին։ Այս երեւոյթը զըղջումների եւ զանազան ենթադրութիւնների առիթ տուեց։ Զայնաւորներից շատերը տրամադիր էին հաւատալու, որ Միխայլով քաշվելու էր կօնցեսիայից, թէկուզ նոյնութեամբ ընդունէր քաղաքը նրա նախնական պայմանը, թէեւ այս խնդիրը վիճելի էր եւ միմիայն ենթադրութիւնների վրա հիմնած։ Մի քանիսը զղջումն արտայայտեցին, երբ Միխայլով հեռացաւ, որովհետեւ նրա քաշվելուց յետոյ հրապարակի վրա ոչ ոք չը կար, իսկ քաղաքի ուժերից վեր էր սեփական միջոցներով ջուր բերել։ Այս բոլորը տրամադրել էին ձայնաւորներին այնքան էլ սակարկող չը լինել այդպիսի ծանրակշիռ խնդիրներում գոնէ այսուհետեւ եւ ահա այսպիսի տրամադրութեան տակ վարչութեան առաջ դրվում է ինժէներ Բաբովի առաջարկութիւնը։

Ինժէներ Բաբով, ընդունելով նոյն իսկ Միխայլովի փոփոխված պայմանը, այն է կօնցեսիայի ժամանակամիջոցը 36 տարի, քաղաքի առուների փակման հարց չը դնել, եւ գործի հէնց սկզբից քաղաքին ժամանակից անել արդիւնքի մի հինգերորդական մասին, ջրի կօնցեսիային միացրել էր ձիաքարշի կօնցեսիան, այդ երկու կօնցէսիաները համարելով անբաժան։ Դա առիթ եղաւ մի փոքր վիճաբանութիւնների, որքան էլ վերը բերած պատճառներով դումայի մեծամասնութիւնը տրամադիր էր համաձայնութեան գալ։ Մի «եթէ»-ով կօնցեսիօնէրը շահում էր 10 տարի։ Ձիաքարշի կօնցեսիայի ժամանակամիջոցը նոյնպէս ընդունելով 36 տարի, նա իրաւունք ունի շահվել նորից տաս տարի ժամանակամիջոցով, եթէ 18 տարվայ ընթացքում ձիաքարշը փոխարինվի էլէքտրական տրամվայի։ Ո՞վ է կօնցեսիօնէրի ձեռքը բռնում, որ հէնց սկզբից չօգտվի ջրանցքի ուժով, այդ ոյժը գործ դնելով տրամվայի վրա, կամ ինչու կօնցեսիօնէրը իր յարմարութիւնների համար ձիաքարշի փոխարէն տրամվայ անցկացնելով, պիտի պահանջ դնէ մի նոր տասնեակ տարով օգտվելու քաղաքից, ոռքերի տակն է ամբողջ ցուցահանդէսն իր բազմերանգ պաւիլիոններով ու խայտաբղէտ տեսարաններով։ Արժէ այդ բարձունքից դիտել քաղաքն ու ցուցահանդէսը—մանաւանդ երեկոյեան։ Բայց այդ բաւականութիւնն էլ ձրի չէ,—բարձրանալու համար պէտք է վճարել 10 կոպէկ...

Ինչպէս վերեւում նկատեցինք, նաւթային վիշկան զետեղված է պաւիլիոնի մէջտեղը—մուտքի հանդէպ։ Նրա երկու կողմերում կան ընդհանուր բաժանմունքներ հարուստ ու հետաքրքրաշարժ առարկաներով։

Աջակողմեան բաժանմունքում պատից կախված են բազմաթիւ դիագրամներ, պատկերներ ու վիճակագրական տեղեկութիւնների թերթեր նաւթի—(համաշխարհային եւ մասնաւորապէս Կովկասի)—վաճառականութեան, նաւթային բանուորների ազգայնութեան մասին եւ այլն։

Բացի դրանից, կան նաեւ բազմաթիւ յատակագծեր ու լուսանկարչական պատկերներ, որոնք ներկայացնում են նաւթային աշխարհի զանազան մասերը, գործարանները, հոր փորելու, նաւթը զտելու եւ հաւաքելու զանազան տեսարանները, «Նաւթարդիւնաբերողների ժողովի» կառուցած շինութիւնները եւ այլն։

Ամենաներսի սենեակում, որ յատկապէս «Նաւթարդիւնաբերողների ժողովի» բաժինն է կազմում, ի միջի այլոց, ցուցադրված է նաւթին եւ նրա արդիւնագործութեանը վերաբերեալ հարուստ գրականութիւնը—բազմաթիւ հատորներից բաղկացած։

Դրանից այս կողմը աչքի են ընկնում մոդելները, որոնցից մէկը պատկերացնում է նաւթի գործարանը, իսկ միւսը՝ նաւթահանքը։ Երկուսն էլ բաւական մեծ—(մանաւանդ առաջինը)—ու բնական են եւ կարող են գաղափար տալ իսկականի մասին։

Անկիւններից մէկում, փոքրիկ բուրգի նմանութիւն ունեցող պատուանդանի վրա, ցուցադրած են զուտ նաւթի բազմազան տեսակները եւ նրա բոլոր արտադրութիւնները—գազոլին, բենզին, ծանր ու թեթեւ կերոսին, վազելին, նաւթային ճարպ, քսելու զանազան տեսակ իւղեր եւ այլն։

Ձախակողմեան բաժանմունքում կախված են դիագրամներ ու վիճակագրական տեղեկութիւններ նաւթի համաշխարհային արդիւնաբերութեան, նաւթահանքերի դրութեան, բանուորների քանակութեան, օրավարձի, դժբաղդ դէպքերի, ազգայնութեան ու նրանց դրագիտութեան մասին եւ այլն։ Բացի դրանից, այդտեղ կան երեք զանազանագոյն բուրգեր, որոնք կօնկրէտ կերպով պատկերացնում են ամբողջ Ապշերոնեան թերակղզու վրա ստացված նաւթի քանակութեան աստիճանաբար զարգանալը—(1863 թուականից մինչեւ 1900), նաւթի (1869-ից մինչեւ 1900 թ.) եւ նաւթային մնացորդների (1880—1900 թ.) արտահանումը դէպի զանազան կողմեր։ Կան նաեւ զանազան գործիքներ դարձեալ նաւթի արդիւնագործութեան վերաբերեալ։

Այդ բաժանմունքի անկիւններից մէկում Ծատուրեանի լամպային վաճառատունը ցուցադրել է զանազան ձեւի, մեծութեան ու յատկութեան լամպաներ։

Նաւթային բաժնի այդ ընդհանուր ու համառօտ նկարագրից յետոյ դառնանք այժմ բուն խնդրին, աշխատենք օգտվել ցուցադրած նիւթերից՝ ամփոփ կերպով պատկերացնելու նաւթային ամբողջ արդիւնագործութիւնը, նրա անցեալն ու ներկան, պէս-պէս երեւոյթները եւ լաւ ու վատ կողմերը։

Դեռ հին դարերում մարդկութեանը ծանօթ

---

*) Յայտնում ենք շնորհակալութիւն այդ բաժնի կառավարիչ ինժենէր պ. Ալիբէկեանցին, որը սիրալիր կերպով մեր տրամադրութեան տակ դրեց նաւթին վերաբերեալ ամբողջ գրականութիւնը։ Ն. Թ.

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՑՈՒՑԱՀԱՆԴԷՍԸ

XV

Բագուի բաժնից դիմենք ուղղակի դէպի նաւթային բաժինը *) եւ զննենք այն օսկէ հեղուկի մշակութեան ձեւն ու արտադրած նիւթերը, որ զօրեղ զարկ է տուել թէ Բագուի, թէ Կովկասի եւ թէ ամբողջ Ռուսաստանի անտեսական կեանքին, որ ահագին նշանակութիւն է ստացել համաշխարհային վաճառականութեան համար։

Նաւթային բաժնի պաւիլիոնը բարձրացած է ցուցահանդէսի մէջտեղում եւ դեռ շատ հեռուից ուշադրութիւն է գրաւում իր փոքրիկ աշտարականման դիտարանով եւ ալեծածան եռագոյն դրօշակով։ Բայց նա ուշադրաւ է ոչ միայն իր արտաքին տեսքով, այլ եւ իր ներքին բովանդակութեամբ, իր ամբողջ էութեամբ։

Ներկայ ցուցահանդէսում նա առաջին տեղն է բռնում իր օրինակելի կազմակերպութեամբ, ցուցադրած առարկաների կանոնաւոր դասաւորութեամբ եւ մանաւանդ բազմաթիւ վիճակագրական թերով ու տեղեկութիւններով։ Միայն այստեղ այցելուն եւրոպական կանոնաւոր ցուցահանդէսի տպաւորութիւն է ստանում, միայն այստեղից նա գոհ սրտով հեռանում է իրան հետաքրքրող առարկայի մասին ամփոփ գաղափար կազմելով։

Ընդարձակ մուտքից մտնում էք ներս եւ ձեր հանդէպ իսկոյն բացվում է մի հետաքրքիր գործողութեան պատկեր։ Ահագին մեծութեան երկաթէ փորիչը մի առանձին աղմուկով, մի առանձին «չախկ ու թուխկով» բարձրանում է վերեւ, մի վայրկեան կանգ է առնում—կարծես իր չորս կողմը դիտում—եւ ապա նորից ուժգնութեամբ մտնում գետնի մթին խորքը։ Այդտեղ նա իր վայրկենական հանգիստն է վայելում եւ ապա լոյս աշխարհ դիմում։ Այդ գործողութիւնը շարունակվում է ամբողջ օրը, որպէս զի բոլոր այցելուները կարողանան գաղափար կազմել, թէ ինչպէս են փորում նաւթային հորերը։

Հորի շուրջը թափված են փորելու եւ նաւթ քաշելու գործիքները—բոլորն էլ բնական մեծութեամբ, բոլորն էլ Բագուից բերված։ Շաբաթվայ որոշ օրերում ցոյց է տրվում նաեւ նաւթ քաշելու գործողութիւնը, դարձեալ նոյն հորի վրա։ Այդ գործողութիւնը իսկականից տարբերվում է միայն նրանով, որ այստեղ նաւթի փոխարէն գետնի տակից ցեխ, ջուր ու աւազ է դուրս գալիս։

Հորը շրջապատված է փայտաշէն պատնէշով, որ ներկայացնում է իսկ եւ իսկ «նաւթային վիշկան»։ Ինչին զանազանութիւնը կայանում է նրանում, որ այստեղ կան կլորապտոյտ սանդուղքներ, այն ինչ բնական վիշկան զուրկ է դրանցից։ Նա ունենում է միայն մի ուղղաձիգ սանդուղք։

Այս օձապտոյտ սանդուղքը ձեզ տանում է դէպի վերեւ, դէպի վիշկայի գլուխը զարդարող պաշտպանը, որտեղից բացվում է մի հրաշալի տեսարան. ձեր առաջն է ամբողջ Թիֆլիսն իր ծառազարդ փողոցներով, բազմատարազ տներով ու ընդհանուր մշտաժպիտ տեսքով. ձեր ոտքերի տակն է ամբողջ ցուցահանդէսն իր բազմերանգ պաւիլիոններով ու խայտաբղէտ տեսարաններով։ Արժէ այդ բարձունքից դիտել քաղաքն ու ցուցահանդէսը—մանաւանդ երեկոյեան։ Բայց այդ բաւականութիւնն էլ ձրի չէ,—բարձրանալու համար պէտք է վճարել 10 կոպէկ...

Ինչպէս վերեւում նկատեցինք, նաւթային վիշկան զետեղված է պաւիլիոնի մէջտեղը—մուտքի հանդէպ։ Նրա երկու կողմերում կան ընդհանուր բաժանմունքներ հարուստ ու հետաքրքրաշարժ առարկաներով։

Աջակողմեան բաժանմունքում պատից կախված են բազմաթիւ դիագրամներ, պատկերներ ու վիճակագրական տեղեկութիւնների թերթեր նաւթի—(համաշխարհային եւ մասնաւորապէս Կովկասի)—վաճառականութեան, նաւթային բանուորների ազգայնութեան մասին եւ այլն։

Բացի դրանից, կան նաեւ բազմաթիւ յատակագծեր ու լուսանկարչական պատկերներ, որոնք ներկայացնում են նաւթային աշխարհի զանազան մասերը, գործարանները, հոր փորելու, նաւթը զտելու եւ հաւաքելու զանազան տեսարանները, «Նաւթարդիւնաբերողների ժողովի» կառուցած շինութիւնները եւ այլն։

Ամենաներսի սենեակում, որ յատկապէս «Նաւթարդիւնաբերողների ժողովի» բաժինն է կազմում, ի միջի այլոց, ցուցադրված է նաւթին եւ նրա արդիւնագործութեանը վերաբերեալ հարուստ գրականութիւնը—բազմաթիւ հատորներից բաղկացած։

Դրանից այս կողմը աչքի են ընկնում մոդելները, որոնցից մէկը պատկերացնում է նաւթի գործարանը, իսկ միւսը՝ նաւթահանքը։ Երկուսն էլ բաւական մեծ—(մանաւանդ առաջինը)—ու բնական են եւ կարող են գաղա-

—չէ՞ որ պատճառաբանված ծախքը չնչին բան է ձիաքարշի անյարմարութիւնների համեմատութեամբ։ Զրի կոնցեսիան միաձայն ընդունելուց յետոյ, նպատակի չը ծառայեց այն վիճաբանութիւնը, որ ուզում էր դուրս ձգել նորից 10 տարով օգտվելու կէտը։ Բաթօվ, որ ներկայ էր, երկու հարցերը կապելով միմեանց, այդ կէտը չը զիջեց եւ դուման ընդունեց ձայնի բազմութեամբ նաեւ ձիաքարշի կոնցեսիան, թէեւ մի փոքր ակամայից։ Պահանջը ժողովրդի կողմից մեծ էր. ջրի հարցը պէտք էր լուծել եւ դրա համար անխուսափելի էին զիջողութիւններ նաեւ քաղաքի կողմից։ Չը նայած այս բոլորին, հարցի այս կերպ վճռվելը ուրախութեամբ ընդունվեց հասարակութեան կողմից եւ ընդհանուրի արամադրութիւնը գոհ է։

Միխայլովի ժամանակ կային պահանջողներ, որ այդ ձեռնարկութիւնը յանձնվէր քաղաքացիներին, ի նկատի չունենալով մեր մէջ այդպիսի գործ ձեռնարկողների բացակայութիւնը։ Այժմ առիթ է ներկայացել, ցանկացողը թող մէջ գայ։ Կոնցեսիոնէրը, ժառդիր լինելով հիմնել ակցիոներական ընկերութիւն, առաջին վեց ամսվայ ընթացքում ակցիներ գտնելը վերապահում է բացառապէս Երեւանի եւ Երեւանեան նահանգի ժողովրդին։

Հարցը վճռվելուց յետոյ կոնցեսիոնէրը գրաւական ներկայացրեց 4000 ռուբլի։ Ջրանցքը կը կառուցվի, հէնց որ կը ասացվի թոյլատրութիւն. միջնորդողը պիտի լինի քաղաքը, ինչպէս եւ այն հողերի գնման միջնորդութիւնը, որոնք ընկած են ջրի ճանապարհի վրա։

Դումայի այդ նոյն ժողովում դրված էր նաեւ սպանդանոցի հարցը, որը նոյնպէս վճռվեց դրական կերպով։ Քաղաքը յատկացրեց սպանդանոցի կառուցման համար 25,000 ռուբլի։

Ա—Դօ.

ՆԱՄԱԿ ԱԼԷՔՍԱՆԴՐՕՊՕԼԻՑ

—

Հոկտեմբերի 5-ին

Վերջին ժամանակներս մենք առիթ ունեցանք մօտից ծանօթանալու այն մի շարք անպատիւ եւ անխիղճ գործողութիւնների հետ, որ թոյլ տուին իրանց կատարելու Երեւանեան երկաթուղու դիծը շինող կապալառուները։ Մենք տեսանք հարիւրաւոր մշակների լաց ու կոծը, մենք լսեցինք տասնեակ մանր-մունր գործակատարների բողոքն ու անէծքը։ Ալէքսանդրոպոլի, Երեւանի եւ Թիֆլիսի հաշտարար եւ նահանգական դատարաններում այդ տեսակ հարստահարութեան անթիւ եւ անհամար գործեր են դատվում։ Զմօյրօ, Կալպիցին, Կուբիցկի եւ Կել-Բլօկ կապառուները ամեն տեսակ հարստահարութիւններ եւ զրկանքներ են պատճառել թէ խեղճ ու քաղցած մշակներին, թէ ճակատի դառն քրտինքով ապրող արհեստաւորներին եւ թէ բոլոր այն մարդկանց, որոնք երբ եւ է իրանց հետ գործ են ունեցել։ Մենք ապշած մնացինք, երբ հարիւրաւոր բողոքների բերանից լսեցինք այն գործերի մասին, որ թոյլ են տուել իրանց այդ անկուշտ մարդիկ։

Մի ոմն հրէայ Իսայ Իզրաիլովիչ Զմօյրօի մասին պատմում են, թէ նա ամեն անգամ մշակներին փող բաժանելիս առաջարկել է նրանց բաւականանալ հաստելիքի մի տասներորդականով (քսան ռուբլու փոխարէն ստանալ 2 ռուբլի), իսկ այն ըմբոստներին, որոնք ընդդիմացել են եւ չեն կամեցել աչքի ընկնող զիջումներ անել, նա հայհոյել է եւ ծեծել է կշտին դրած մտրակով եւ մինչեւ իսկ սպառնացել է սպանել՝ ցոյց տալով ատրճանակը։

Ահա այսպիսի մարդկանց մօտ են աշխատել մեր գաւառի բազմաթիւ քաղցած գիւղացիները, ահա սրանց հետ է այն հարիւրաւոր բողոքների դատը, որոնք մի քանի ամիս տանջանքներով աշխատելուց յետոյ փող չեն կարողացել ստանալ եւ դեռ դուցէ մի քանի տանի էլ ապարդիւն կերպով պէտք է քարշ գան դատարաններում։

Այս տեսակ հարստահարութիւններ, ինչպէս յայտնի է «Մշակի» ընթերցողներին, կատարվեցան նաեւ Թիֆլիս-Կարսի գծի շինութեան ժամանակ, բայց բարեբաղդաբար այն ժամանակվայ հարստահարիչները մասամբ զսպում էին իրանց ախորժակը, եւ եթէ զանազան Կոնսնօվներ եւ Ադրիօլէտիներ զրկում եւ հարստահարում էին աղքատ բանուորներին, բայց գոնէ չէին վիրաւորում նրանց կրօնական եւ ազգային զգացմունքները։

Բայց բանից դուրս է գալիս, որ հեռատես հարստահարիչները իրանց մօտ ծառայողների եւ աշխատողների ձեռքը չեն տուել գոնէ այնպիսի փաստեր, որոնք դատարաններում հաստատէին նրանց պահանջի գործը։ «Рабочая книжка» անուանված տետրը, որոնց ճակատին գրված է—«Тигранъ Мхоевъ», «Серопъ Сехпозовъ», «Оганесъ Петросовъ» եւ այլն եւ այլն, իրանց վրա չեն կրում կապալառուի ստորագրութիւնը, որով կարելի լինէր ապացուցանել դատի եւ պահանջի օրինականութիւնը։

Գուցէ այս է պատճառը, որ դատարաններից յոյսերը կտրած բազմաթիւ մշակներ, իրանց բողոքները ուղղել են արդարադատութեան մինիստրին եւ Կովկասի կառավարչապետին։

Ի՞նչ հետեւանքներ պիտի ունենան այս բողոքները, դժուար է գուշակել...

Գ. Մ.

ՆԱՄԱԿ ՂՈՒԲԱՑԻՑ

—

Սեպտեմբերի 25-ին

Թիֆլիսի զինուորական դատարանի բաժինը, սեպտեմբերի 20-ին, 21-ին եւ 22-ին, քննեցին։ Զը նայելով այդ հանգամանքին, կառավարութիւնն անուշադիր թողեց նաւթային հորերը, բայց ոչ երկար ժամանակով։ 1820 թ. նա բոլոր նաւթահանքերը 4 տարի ժամանակով կապալով տուեց տարեկան 100,000 ռուբլի վճարով *)։

Այդ ժամանակաշրջանը լրանալուն պէս կառավարութիւնն սկսեց ինքը շահագործել նաւթահանքերը, սակայն նա հազիւ կարողացաւ տարեկան 76,000 ռուբլի զուտ եկամուտ ստանալ։ Հետեւեալ տարին նորից սկսվեց կապալառութիւնը, որը շարունակվեց մինչեւ 1873 թուականը։

Այդպիսով նաւթահանքերն անցնում էին մի կապալառուի ձեռքից միւսին եւ մնում էին անփոփոխ ու չը կատարելագործված։ Ոչ ոք չէր մտածում նաւթի արդիւնագործութիւնը կատարելագործելու մասին։ Կառավարութիւնը տարեկան մօտ 85,000 ռուբլի կապալավարձ էր ստանում եւ շատ գոհ էր, իսկ մասնաւոր կապալառուները աշխատում էին միայն որքան կարելի է շուտ ու շատ եկամուտ ստանալ, իսկ ապագայի մասին ոչ ոք չէր մտածում։

Շատ հասկանալի է, որ այդպիսի հանգամանքներում նաւթահանքերը բարեկարգվել չէին կարող եւ նրանց արդիւնաբերած նաւթի քանակութիւնն էլ չէր աւելանում։ Բոլոր նաւթահորերից տարեկան հազիւ 200,000 պուդ նաւթ էր ստացվում։

Նաւթի զտումը—առանձին գործիքներով մաքրելը—սկսվեց միայն XIX դարի սկզբում եւ այդ բանի առաջին փորձը պատկանում է Կովկասին։ 1823 թ-ին Դուբինին ազգանունով մի գիւղացի Գրօզնի քաղաքի մօտ հիմնեց մի փոքրիկ գործարան նաւթ զտելու համար։ Դրանից յետոյ երկրորդ փորձը պատկանում է ինժեներ Վօսկօբօյնիկովին, որը 1830 թ. Բաղուի մօտ հիմնեց մի նոր գործարան։ Բայց այդ գործարանները նահապետական ձեւ ունէին եւ շատ քիչ արդիւնք էին տալիս, ուստի աջողութիւն չունեցան։

Նաւթի արդիւնագործութեանը մեծ զարկ տուեց Հիւսիսային Ամերիկայի նաւթի գիւտը, որը ապարէզ քաշեց հնարագէտ ամերիկացի կապիտալիստներին ու գիտնականներին։ Մինչեւ այդ ժամանակ ձեռքերով էին դուրս քաշում նաւթահորերի հեղուկը։ Ամերիկացիները հնարեցին հոր փորելու եւ նաւթ դուրս քաշելու գործիքներ եւ դրանով հեշտացրին ու շահաւէտ դարձրին նաւթային գործը։ Նրանք սկսեցին կանոնաւոր ձեւով զտել ստացված նաւթը եւ կերօսին պատրաստել։

Ամերիկական կերօսինը շուտով ամբողջ աշխարհի ուշադրութեանն արժանացաւ եւ մեծ վաճառականութեան առարկայ դարձաւ։ Նա առաջին անգամ 1860 թ-ին մուտք գործեց Եւրոպա եւ դրանից յետոյ արագ կերպով տարածվեց նրա զանազան կողմերը եւ հասաւ նոյն իսկ մինչեւ Ռուսաստան։

Ամերիկայի աջողութիւնը խթան դարձաւ Ռուսաստանի համար։ Այստեղ էլ սկսեցին ամեն ջանք ու աշխատանք գործ դնել, որպէս զի Ապշերոնեան հեղուկի հարստութիւնից մի համաշխարհային արդիւնագործութիւն ստեղծեն։ Սկզբնական փորձերն արին Կօկօրեվ եւ Վիտէ կապիտալիստները։ Դրանցից առաջինը (1859 թ.) նաւթային գործարան հիմնեց Բաղուի մօտ—կրակապաշտների հին տաճարի կըշտին, որպէս զի հնարաւոր լինի գետնի ճեղքուածքներից դուրս եկող գազը իբրեւ վառելիք գործածել։ Երկրորդն իր գործարանը հիմնեց դարձեալ Բաղուի մօտ—փոքրիկ «Սուրբ կղզու» վրա։ Բայց այդ երկու գործարաններն էլ անաջողութիւնից փնասվեցին եւ շուտով դադարեցրին իրանց գոյութիւնը։

Այնու ամենայնիւ Կօկօրեվի եւ Վիտէի փորձերը կրթիչ նշանակութիւն ունեցան։ 1863 թ. Զաւադ Մելիքովի նախաձեռնութեամբ Բաղուում հիմնվում է մի նոր գործարան, որի ամբողջ դրամագլուխը հազիւ 300 ռուբլու էր հասնում։ Զափազանց պարզ էր այդ գործարանի կազմակերպութիւնը։ Խորանարդաձեւ մեծ կաթսայի մէջ տաքացնում էին նաւթը. գազը հաւաքվում էր վերեւի մասում եւ այդտեղից գնում խողովակի մէջ, որտեղ նա սառչում էր եւ իբրեւ կերօսին թափվում մի նոր կաթսայ։ Ահա այդ էր ամբողջ գործարանը, որ զետեղված էր բաց երկնքի տակ։

Շատերն սկզբում ծիծաղում էին Մելիքովի անմիտ ձեռնարկութեան վրա, բայց շուտով ծիծաղը նախանձ դարձաւ, որովհետեւ այդ տարօրինակ գործարանը անապատելի աջողութիւն ունեցաւ։ Միրզոյեանի նախաձեռնութեամբ մի նոր ընկերութիւն կազմակերպվեց 2000 ռուբլի դրամագլխով։ Ընկերութիւնը սկսեց նորանոր ձեռնարկութիւններ եւ միշտ էլ աջողութիւն ունեցաւ։ Դրանից յետոյ նաւթի արդիւնագործութիւնն սկսեց աւելի ու աւելի լայն ծաւալ ստանալ եւ հեզհեզէ կատարելագործվել...

Զը նայելով չրջապատող բարեպատեհ հանգամանքներին, այդ առաջադիմութիւնը սկզբներում կատարվում էր չափազանց դանդաղ կերպով։ Վառելանաւթն էլ շատ վատ տեսակի էր ստացվում, թէեւ վաճառվում էր թանգ գներով, այն է պուդը 4 ռուբլի 50 կոպ. Բաղուում եւ 6 ռուբլի Մոսկվայում *)։

Ե. Թ.

*) Ibid.

էր այս սեւ իւղանման հեղուկը, որը երբեմն դուրս էր հոսում երկրի ճեղքուածքներից եւ յայտնի էր «նաւթ» անունով... Նաւթի մասին տեղեկութիւններ պատահում են թէ ս. գրքում եւ թէ Հերոդոտի գրուածքներում *)։

Շատ ու քիչ որոշ տեղեկութիւններ մեր կովկասեան նաւթի մասին պատահում են արաբական պատմաբան Մասուդիի եւ Քեաթիբ Զելեբիի գրուածքներում։ Դրանց ասելով «Բաղդան ամուր քաղաք է. նրա շրջակայքը քարոտ է. քարերից շատերը փայտի նըման վառվում են։ Քաղաքի մօտակայքում 50-ի չափ հորեր կան, որանցից սեւ եւ սպիտակ նաւթային իւղեր են ստացվում»։

Յայտնի ճանապարհորդ Մարկո Պոլօն, XIII-րդ դարում այցելելով Բաղդան, համառօտակի նկարագրում է տեղական նաւթի արդիւնաբերութիւնը, յիշում է, թէ ինչպէս են նաւթը ուղտերով կրում մինչեւ Բաղդադ ու ուրիշ հեռաւոր տեղեր, թէ ինչպէս են գործածում վառելիքի եւ լուսաւորութեան համար։

XVIII-րդ դարում Բաղդան այցելում են Կեմպֆեր, Գմելին, Լերխէ գիտնականները եւ աւելի մանրամասն նկարագրում Բաղդի այդ անհատնելի հարստութիւնը—նաւթը *)։

Գմելինի ասելով Բաղդի խաները իրանց օգտին էին վերցնում նաւթից ստացված ամբողջ եկամուտը, որ տարեկան 40,000 ռուբլու էր հասնում։

1813 թուականին Բաղդի, Ղուբայի եւ Դերբենդի խանութիւններն անցան Ռուսաստանի իշխանութեան տակ եւ նաւթային հորերը պետական գանձարանի սեփականութիւնը դարձան։ Զը նայելով այդ հանգամանքին, կառավարութիւնն անուշադիր թողեց նաւթային հորերը, բայց ոչ երկար ժամանակով։ 1820 թ. նա բոլոր նաւթահանքերը 4 տարի ժամանակով կապալով տուեց տարեկան 100,000 ռուբլի վճարով *)։

Այդ ժամանակաշրջանը լրանալուն պէս կառավարութիւնն սկսեց ինքը շահագործել նաւթահանքերը, սակայն նա հազիւ կարողացաւ տարեկան 76,000 ռուբլի զուտ եկամուտ ստանալ։ Հետեւեալ տարին նորից սկսվեց կապալառութիւնը, որը շարունակվեց մինչեւ 1873 թուականը։

Այդպիսով նաւթահանքերն անցնում էին մի կապալառուի ձեռքից միւսին եւ մնում էին անփոփոխ ու չը կատարելագործված։ Ոչ ոք չէր մտածում նաւթի արդիւնագործութիւնը կատարելագործելու մասին։ Կառավարութիւնը տարեկան մօտ 85,000 ռուբլի կապալավարձ էր ստանում եւ շատ գոհ էր, իսկ մասնաւոր կապալառուները աշխատում էին միայն որքան կարելի է շուտ ու շատ եկամուտ ստանալ, իսկ ապագայի մասին ոչ ոք չէր մտածում։

Շատ հասկանալի է, որ այդպիսի հանգամանքներում նաւթահանքերը բարեկարգվել չէին կարող եւ նրանց արդիւնաբերած նաւթի քանակութիւնն էլ չէր աւելանում։ Բոլոր նաւթահորերից տարեկան հազիւ 200,000 պուդ նաւթ էր ստացվում։

Նաւթի զտումը—առանձին գործիքներով մաքրելը—սկսվեց միայն XIX դարի սկզբում եւ այդ բանի առաջին փորձը պատկանում է Կովկասին։ 1823 թ-ին Դուբինին ազգանունով մի գիւղացի Գրօզնի քաղաքի մօտ հիմնեց մի փոքրիկ գործարան նաւթ զտելու համար։ Դրանից յետոյ երկրորդ փորձը պատկանում է

*) Hans Höfer „Das Erdöl“.

*) Տես Գ. Старцевъ: „Бакинская нефт. промышлен.“.

*) Ibid.

պառնալով, թէ ինչու աւելի չը բերեց։ Երրորդը պատմում է, թէ ինչպէս իր ազգականներին Խասին ծառից կապեց եւ սպանեց այն բանի համար, որ նրանցից մէկը դժբաղդութիւն է ունեցել ամուսնանալ աւազակի կնոջ հետ։

Ղուբայի գաւառապետը եւ կապիտան Բակինովսկի պատմում են հետեւեալը։ Տեղեկութիւն ստանալով, որ աւազակապետը գտնվում է Նարաջանցի մի բէկի տանը, իսկոյն մարդկանց հետ նրանք գնում են այնտեղ եւ սկսվում է երկու կողմից էլ սարսափելի հրացանաձգութիւն, որի ժամանակ սպանվում է աւազակի ընկեր՝ բուդուղցի Գաբարը։ Բաւական երկար միջոց Խասին անձնատուր չէ լինում, իսկ գաւառապետը տան մօտից չը հեռանալով, սպառնում է կրակել տունը նաւթով։ Այդ ժամանակ միայն աւազակապետը անձնատուր է լինում, յանձնելով հրացանը։

Այդ բոլոր վկաների հարց ու փորձը տեւում է երկու օր։ Երրորդ օրը խօսքը պրոկուրօրին է տրվում, որ մի առ մի թելով տխրահռչակ Խասի բազմաթիւ չարագործութիւնները՝ միակ արժանի պատիժ համարում է կախաղանը, որին նա, անկասկած, պիտի ենթարկվի, ազատելով գաւառը այդ սարսափելի հրէշ—չարագործից։ Պաշտպան պ. Բաթօվ ասում է.—«Պրոկուրօրի օգնականի պաշտօնակատարը օրտալից ձայնով է աւետում Խասի մահվան ու թաղման մասին, բայց ամեն բանում զիջումն ու ներումն պիտի լինի։ Խասի տգէտ է, անկիրթ է. նա այլ պայմանների մէջ է ծնվել եւ այդ պատճառով նա աւազակ է դարձել»։ Պաշտպանը ներումն է խնդրում։

Պաշտպանի խօսքը ցնցող տպաւորութիւն էր թողնում։ Բայց դատարանը մահվան պատժի վճիռ կայացրեց։ Խասի այն տեսակ աւազակներից չէր, որ արժանի լինէր ներման. 13 տարվայ ընթացքում նա երկիւղ, սարսափ է գցել իր չարագործութիւններով ամբողջ գաւառի մէջ։

N. N.

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

—

Բաղու, հոկտեմբերի 6-ին

Տարօրինակ մարդիկ ենք մենք, ճշմարիտ։ Ամեն մի ձեռնարկութեան մէջ ուզում ենք անպատճառ ցոյց տալ մեր յետամնացութիւնը քաղաքակրթված ազգերից. ամեն քայլափոխում գռեհկութեամբ ապացուցել ենք աշխատում մեր անտարբերութիւնը դէպի հասարակութեան արդարացի բողոքները ու պահանջները եւ չենք էլ մտածում երբ եւ իցէ մասով չափ այդ արդարացի պահանջներին գոհացումն տալ։ Մեր սկսած ամեն մի ձեռնարկութեան մէջ ցոյց ենք տալիս տհաճութիւն ու անձեռնհասութիւն։

Այլապէս ինչով բացատրել մեր մի քանի հրատարակիչների վարմունքը, որոնք դեռ այն

ինժեներ Վօսկօբօյնիկովին, որը 1830 թ. Բաղդի մօտ հիմնեց մի նոր գործարան։ Բայց այդ գործարանները նահապետական ձեւ ունէին եւ շատ քիչ արդիւնք էին տալիս, ուստի աջողութիւն չունեցան։

Նաւթի արդիւնագործութեանը մեծ զարկ տուեց Հիւսիսային Ամերիկայի նաւթի գիւտը, որը ապարէզ քաշեց հնարագէտ ամերիկացի կապիտալիստներին ու գիտնականներին։ Մինչեւ այդ ժամանակ ձեռքերով էին դուրս քաշում նաւթահորերի հեղուկը։ Ամերիկացիները հնարեցին հոր փորելու եւ նաւթ դուրս քաշելու գործիքներ եւ դրանով հեշտացրին ու շահաւէտ դարձրին նաւթային գործը։ Նրանք սկսեցին կանոնաւոր ձեւով զտել ստացված նաւթը եւ կերօսին պատրաստել։

Ամերիկական կերօսինը շուտով ամբողջ աշխարհի ուշադրութեանն արժանացաւ եւ մեծ վաճառականութեան առարկայ դարձաւ։ Նա առաջին անգամ 1860 թ-ին մուտք գործեց Եւրոպա եւ դրանից յետոյ արագ կերպով տարածվեց նրա զանազան կողմերը եւ հասաւ նոյն իսկ մինչեւ Ռուսաստան։

Ամերիկայի աջողութիւնը խթան դարձաւ Ռուսաստանի համար։ Այստեղ էլ սկսեցին ամեն ջանք ու աշխատանք գործ դնել, որպէս զի Ապշերոնեան հեղուկի հարստութիւնից մի համաշխարհային արդիւնագործութիւն ստեղծեն։ Սկզբնական փորձերն արին Կօկօրեվ եւ Վիտէ կապիտալիստները։ Դրանցից առաջինը (1859 թ.) նաւթային գործարան հիմնեց Բաղդի մօտ—կրակապաշտների հին տաճարի կըշտին, որպէս զի հնարաւոր լինի գետնի ճեղքուածքներից դուրս եկող գազը իբրեւ վառելիք գործածել։ Երկրորդն իր գործարանը հիմնեց դարձեալ Բաղդի մօտ—փոքրիկ «Սուրբ կղզու» վրա։ Բայց այդ երկու գործարաններն էլ անաջողութիւնից փնասվեցին եւ շուտով դադարեցրին իրանց գոյութիւնը։

Այնու ամենայնիւ Կօկօրեվի եւ Վիտէի փորձերը կրթիչ նշանակութիւն ունեցան։ 1863 թ. Զաւադ Մելիքովի նախաձեռնութեամբ Բաղդում հիմնվում է մի նոր գործարան, որի ամբողջ դրամագլուխը հազիւ 300 ռուբլու էր հասնում։ Զափազանց պարզ էր այդ գործարանի կազմակերպութիւնը։ Խորանարդաձեւ մեծ կաթսայի մէջ տաքացնում էին նաւթը. գազը հաւաքվում էր վերեւի մասում եւ այդտեղից գնում խողովակի մէջ, որտեղ նա սառչում էր եւ իբրեւ կերօսին թափվում մի նոր կաթսայ։ Ահա այդ էր ամբողջ գործարանը, որ զետեղված էր բաց երկնքի տակ։

Շատերն սկզբում ծիծաղում էին Մելիքովի անմիտ ձեռնարկութեան վրա, բայց շուտով ծիծաղը նախանձ դարձաւ, որովհետեւ այդ տարօրինակ գործարանը անապատելի աջողութիւն ունեցաւ։ Միրզոյեանի նախաձեռնութեամբ մի նոր ընկերութիւն կազմակերպվեց 2000 ռուբլի դրամագլխով։ Ընկերութիւնը սկսեց նորանոր ձեռնարկութիւններ եւ միշտ էլ աջողութիւն ունեցաւ։ Դրանից յետոյ նաւթի արդիւնագործութիւնն սկսեց աւելի ու աւելի լայն ծաւալ ստանալ եւ հեզհեզէ կատարելագործվել...

Զը նայելով չրջապատող բարեպատեհ հանգամանքներին, այդ առաջադիմութիւնը սկզբներում կատարվում էր չափազանց դանդաղ կերպով։ Վառելանաւթն էլ շատ վատ տեսակի էր ստացվում, թէեւ վաճառվում էր թանգ գներով, այն է պուդը 4 ռուբլի 50 կոպ. Բաղդում եւ 6 ռուբլի Մոսկվայում *)։

Ե. Թ.

*) Ibid.

ժամանակ, երբ միայն որ եւ է գրքի հրատարակութեան միջոցն են յղանում, առանց երկար ու բարակ կշռադատելու իրանց ձեռնհասութիւնը, ձեռքի տակ ունեցած միջոցները, իսկոյն եւ եթ ձեռնամուխ են լինում բաժանորդագրութեան գործին։ Իրանց բարեկամների ու գործակալների միջոցով աշխատում են հնար եղածին չափ բաժանորդներ հաւաքել եւ վճարները կանխիկ առնալ, խոստանալով որոշած ժամանակին լոյս ընծայել ենթադրած հրատարակութիւնը։ Դժբախտաբար, այդ գործի սկիզբն է. հրատարակիչ պարոնները նոյն իսկ արտադրութիւն էլ չեն ցոյց տալիս ճշտապահ գտնվելու։ Ասենք թէ այս կերպ վարմունքը յատուկ է զանազան առեւտրական ձեռնարկութիւն սկսողներին եւ մասնաւորապէս սունկի պէս բուսնող նաւթարդիւնաբերական ընկերութիւններ կազմակերպողներին, որոնց բազմաթիւ նմուշներ միմիայն Բագուն կարող է տալ, իսկ իրանք իրանց գրականութեան նուիրողների, ազգային լուսաւորութեան ու ինքնաճանաչութեան գործն իրանց ուսերի վրա կրելու յաւակնութիւն ունեցողների այդ կերպ վարմունքը ինչով բացատրել։

Դեռ 1899 թ. մայիսի սկզբներին, մի ոմն Լեւոնեան Բագուում բաժանորդներ էր ժողովում Աշըղ Ջիւանու երկերի լիակատար ժողովածուի համար, որը պիտի հրատարակվէր տասը հատորով, որոնցից սակայն մինչեւ օրս ստացված է միմիայն առաջին հատորը, իսկ հետեւեալ հատորների հրատարակութեան մասին եւ ոչ մի տեղեկութիւն։ Հրատարակիչը նոյն իսկ ղանում է գէթ մասնի միջոցով տեղեկութիւն տալ բաժանորդներին, թէ ինչ դրութեան մէջ է գտնվում հետեւեալ հատորների տպագրութեան գործը։ Գուցէ պարոնը բաժանորդների այս հասկատ պահանջը կատարելու իրան պարտաւոր էլ չէ համարում, այդ մասին թողնում ենք ընթերցող հասարակութեան դատելու։

Այս տարի էլ պ. Վ. Փափազեանը յայտարարեց, որ ի յիշատակ հանգուցեալ Ջանչեանի հրատարակում է մի բովանդակութեամբ հարուստ ժողովածու «Վտակ» անունով, որը պիտի լոյս տեսնէր յունիսի վերջերին։ Բացված էր բաժանորդագրութիւն, ցանկացողները կարող էին գրվել տեղիս գրավաճառ պ. Ս. Ցարուբիւնեանի մօտ եւ, ինչպէս տեղեկացանք, բաւական թիւով բաժանորդներ կան։ Երկուերեք շաբաթ է, տեղական թէ հայ եւ թէ օտար թերթերում յայտարարվում է, որ «Վտակ» ժողովածուն լոյս է տեսել եւ վաճառվում է այս ինչ կամ այն ինչ տեղում, սակայն մենք՝ Բագուի բաժանորդներս՝ դեռ չենք ստացել։ Ամեն անգամ, երբ դիմում ենք գրավաճառ պ. Ցարուբիւնեանին, թէ երբ կը ստացվի «Վտակ»-ը, նա մեզ պատասխանում է թէ, չը նայելով իր մի քանի անգամ հրատարակչին ու նրա հաւատարմատարին ուղղած նամակներին՝ մինչեւ օրս ոչ գրութիւնների պատասխանն է ստանում եւ ոչ էլ գրքերը իրան միանգամայն անյայտ պատճառներով, թէեւ բաժանորդավճարները լիովին ուղարկված են։ Ի՞նչ անուն տանք, ընթերցող, հրատարակչի այս վարմունքին։

Պարոններ, եթէ դուք կարծում էք, թէ մեզանում որ եւ է հրատարակութեան բաժանորդ գրվողները գրվում են միմիայն պատահմամբ, ստիպված, իրանց ծանօթի խնդիրը մերժած չը լինելու համար, ինչու չէք ընդունում եւ այն, որ այդ հարիւրաւոր բաժանորդների թւում կան եւ այնպիսիները, որոնք գրվել են ինքնաբերաբար, առանց կողմնակի անձանց թախանձանքի, մի տեսակ պահանջ զգալով ունենալ հնարաւորութեան չափ մայրենի լեզուով եղած հրատարակութիւնները։ Չէ՞ որ դուք պարտաւոր էք նրանց արդարացի պահանջը կատարելու։ Նրանք մաքուր զգացմունքներով են վերաբերվել ձեր ձեռնարկած գործին, յուսալով թէ նոր գիրքը մասամբ բաւականութիւն կարող է տալ իրանց հոգեկան պահանջներին, վերջապէս դուք պարտաւոր էք ճշտապահ լինելու։ Որտեղ հրապարակական խոստումն կայ, այնտեղ կայ եւ խոստման ճիշտ կատարումն։

Նամակս դեռ նոր էի վերջացրել, երբ տեղեկացայ, որ այստեղ մի գրավաճառ ստացել է Թիֆլիսից մի քանի օրինակ «Վտակ» եւ փոխանակ բաժանորդներին յանձնելու՝ օգուտով վաճառում է։

Ի դիմաց բաժանորդ—բողոքողների
Ար. Առաքելեան

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Զորեքշաբթի, հոկտեմբերի 10-ին, անայնագործական ժողովում զեկուցումներ կարդացին Ա. Քալանթար՝ անայնագործութեան զարգացման նպաստող միջոցների մասին, իշխանուհի Մ. Թումանեան՝ Թիֆլիսի կենտրոնական անայնագործական դպրոցի մասին եւ Ա. Սահակեան՝ զեմստվոյի անհրաժեշտութեան մասին։ Զեկուցումները յարուցեցին մեծ վիճաբանութիւններ, որոնց վերաբերեալ որոշումները յետաձգվեցին միւս ժողովին։

—

Զորեքշաբթի, հոկտեմբերի 10-ին, փակվեց կովկասեան ցուցահանդէսի թոշնապահական բաժինը։

—

Ինչպէս լավում է, կովկասեան ցուցահանդէսի թատրոնը մինչեւ այժմ ունեցել է 8 հազար րուբլի դէֆիցիտ, որ եւ պէտք է բաժանվի այն անձանց վրա, որոնք գրվել են այդ թատրոնի բաժնետէրեր։

—

«Новое Время» լրագրին գրում են Անդրկովկասից. «Լուրերին նայելով, վերջնականապէս վճռված է այն թիւրքահպատակ հայերին վերաբերեալ հարցը, որոնք զանազան ժամանակ, սկսած 1898 թ-ից, փախել են Թիւրքիայից Ռուսաստան։ Ինչպէս յայտնի է, Կովկասում այդ գաղթականների թիւը 40,000-ի է հասնում։ Նրանց բոլորին առաջարկվում է հեռանալ Ռուսաստանի սահմաններից իրանց ազատ կամքով եւ իրանց հաշուով, իսկ ով չի կամենայ հեռանալ, կարող է մնալ իր բնակութեան այժմեան տեղում եւ գրվել անդամ որ եւ է գիւղական համայնքի, եթէ միայն գիւղական համայնքը կընդունէ նրան։ Իսկ եթէ գիւղական համայնքները չեն հաճանչի ընդունել իրանց մէջ յիշված գաղթականներին, վերջինները կարող են գրվել մեչչանների դասակարգի անդամ։ Ռուսաստանում այդ դրութեան մէջ բոլոր մնացողները պէտք է անյապաղ ընդունեն ռուսահպատակութիւն եւ 1903 թուականից սկսած ենթարկվեն զինուորագրութեան տեղական ազգաբնակութեան հետ միասին։ Ռուսական նոր հպատակներին, որոնք կը գրվեն գիւղական համայնքների անդամ, իրաւունք չէ տրվում հողաբաժին ստանալու նոյն իսկ այնպիսի գիւղերում, որոնք դեռ եւս վերջնական հողային կազմակերպութիւն չեն ստացել։ Ռուսաստանում մնացած գաղթականները եւ նրանց սերունդները կովկասեան քաղաքներից դուրս հողային կալուածքներ ձեռք բերելու իրաւունք ստանում են ռուսահպատակութիւն ընդունելու օրից 20 տարի յետոյ։ Այս բոլոր կանոնները վերաբերում են այն գաղթականներին, որոնք Ռուսաստան են եկել մինչեւ այս տարվայ փետրվարի 1-ը, մնացածները պէտք է դուրս ուղարկվեն Ռուսաստանից»։

—

«Berliner Tageblatt» լրագիրը հաղորդում է, որ սաքսօնական արդիւնաբերողները դիտաւորութիւն ունեն, Ռուսաստանի հետ առեւտրական դաշնագրի հարցը աննպաստ լուծման դէպքում, փոխադրել իրանց գործարանական ձեռնարկութիւնները։ Լրագիրը ասանցոյց է անում, որ սաքսօնական արդիւնաբերողները մի անգամ արդէն դիմեցին այդպիսի միջոցին, այսինքն, մաքսային պատերազմի պատճառով Ռուսաստանի հետ՝ սաքսօնացիներից շատերը իրանց գործարանները տեղափոխեցին Լօձ, Վարշավա, Սօսնովիցի. իսկ մաքսային անբնական պայմանները ստիպեցին նրանց գործարաններ հիմնել Միացեալ-Նահանգներում եւ Աւստրօ-Ունգարիայում։

—

Մօտ օրերումս վերջացան Անդրկովկասեան երկաթուղու Բակուրիանի գծի շինութեան աշխատանքները։ Զորեքշաբթի, հոկտեմբերի 10-ին, մի յանձնաժողով, որի անդամներն էին Պետերբուրգից եկած ինժեներ Դօմբրովսկի, Անդրկովկասեան երկաթուղու գլխաւոր կառավարիչ Վեղենեեւ եւ նոյն երկաթուղու զանազան մասերի կառավարիչները, ճանապարհ ընկաւ Թիֆլիսից՝ ընդունելու այս նոր գիծը շինողից եւ յանձնելու Անդրկովկասեան երկաթուղու վարչութեան։ Մատդրութիւն կայ կանոնաւոր երթեւեկութիւնն այդ գծի վրա սկսել հոկտեմբերի 15-ից։

—

Երդուեալների դատարան Սիբիրում մացը-նելու հարցը վերջնական ձեւով կը քննվի եկող 1902 թուի սկզբին։

—

Հոկտեմբերի 6-ին, մայրաքաղաքի լրագիրների խօսքով, ժողովրդական լուսաւորութեան մինիստր գեներալ-ադիւտանտ Վանովսկի այցելեց Պետերբուրգի հաւալարանը։ Այդ այցելութիւնը տեղի ունեցաւ յանկարծակի։ Կօրիդորում մինիստրը հանդիպեց ուսանողների խմբին, որոնց հետ սկսեց երկարատեւ խօսակցութիւն։ Նա հարցուփորձ էր անում ուսանողներին նրանց նիւթական դրութեան մասին,—ո՞րտեղից են նրանք, ինչու՞ են այս կամ այն ֆակուլտէտը ընտրել։ Ի միջի այլոց մինիստրը հետաքրքրվեց իմանալ, թէ ինչու՞ են այդքան շատ ուսանողներ գտնվում նախաենթակներում այն ժամանակ, երբ դասախօսութիւններ են կարդացվում։ Մինիստրը այցելեց նոյնպէս հաւալարանի վարչութիւնը, խօսակցում էր պրոֆէսօրների հետ եւ ներկայ էր դասախօսութիւններին։ Մինիստրը բաւական երկար մնաց հաւալարանում եւ խոստացաւ շուտով նորից այցելել։

—

ԵՐԵՒԱՆԻՑ մեզ գրում են. «Դիլիջանից մինչեւ Երեւան շարունակ անձրեւում է։ Եղանակները այնքան էլ ցուրտ չեն։ Երեւանը ահագին ժամանակ է թաղված է ցեխի մէջ։ Անցնել փողոցներով անկարելի է»։

—

ԻԳԴԻՐԻՑ մեզ գրում են. «Սուրմալու գաւառի դաշտային եւ լեռնային մասերում հացահատիկների կալսելը բոլորովին վերջացաւ։ Ոչ մի տարի հացահատիկների այսպիսի անբերրիութիւն եղած չէր. շատ տեղերում հազիւ սերմը ստացվեց. մէկին հինգ ստացվածները բացառութիւններ են։ Սակաւաբերք է նաեւ խաղողը. մի խօսքով այս տարի երկրագործութեան արդիւնքը անցեալ տարվայ հակապատկերն է ներկայացնում։ Սպասվում է լաւ բերք բամբակից, որը դեռ եւս կասկածելի է թւում. նոր են սկսել ժողովել բամբակը»։

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՆ

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

—Ինչպէս հաղորդում է «Neue Freie Presse» լրագրի Պետերբուրգի թղթակիցը, ռուսական կառավարչական շրջաններում հաստատ համոզված են, որ Աւղանիստանում անկարելի է ապասել յուզմունքների, որոնք զինեցին եւրոպական պետութիւններին միմեանց դէմ։ Ոչ Անգլիան եւ ոչ Ռուսաստանը վերջին տարիների ընթացքում Կաբուլում մի առանձին ազդեցութիւն չէին վայելում։ Տարեկան նպաստ Աբդուրահմանին վճարվում էր Անգլիայի կողմից միայն նրա թագաւորութեան առաջին տարիները, իսկ յետոյ նպաստի տալը բոլորովին դադարեցնվեց։ Սա ապացուցված փաստ է։ Միակ բանը, որ կարող էր յուզմունքներ առաջացնել,—դա Աբդուրահմանի աւագ եղբօր, Իսհակ-խանի, նախագծերն են, որ վաղուց ապրում է Ռուսաստանում. այսուամենայնիւ քիչ հաւանական է, որ նա որ եւ է իրաւունք յայտնէ աւգանական գահի վերաբերմամբ։

—«Temps» լրագրին հաղորդում են Կ. Պոլսից, թէ ռուսական դեսպան Զինովիեվի հետ ունեցած խօսակցութեան ժամանակ, սուլթանը մի քանի անգամ յիշեց այն բարեկամական կապերի մասին, որոնք միացնում են նրան Ռուսաստանի հետ եւ հարկադրաբար խնդրեց, որ Ռուսաստանը միջամտութիւն գործէ Թիւրքիայի եւ Ֆրանսիայի տարաձայնութիւնների մէջ։ Սուլթանը խնդրեց նաեւ ռուսաց դեսպանին աջակցութիւն ցոյց տալ իր կողմից, որ Պետերբուրգում ընդունվի Թիւրքիայի առաջարկութիւնը Ռուսաստանի միջամտութեան մասին։ Զինովիեվ բացէ ի բաց մերժեց յանձն առնել այդ տեսակ պարտականութիւն։

—Կ. Պոլսից հաղորդում են «Berliner Tageblatt» լրագրին, թէ չը նայելով այն բոլոր հերքումներին, որոնք երեւացին թիւրքական մամուլի մէջ սուլթանի առողջութեան վերաբերմամբ, անկասկած է, որ երիկամունքի հիւանդութիւնը, որով վաղուց տանջվում է սուլթանը, վերջին ժամանակ սաստկացել է։ Օտարերկրեայ բժիշկները, որոնք հրաւիրված էին բժշկական խորհրդակցութեան, յայտնեցին թէ սուլթանի հիւանդութիւնն արդէն հասել է այն աստիճանին, երբ անդամահատութիւնն այլ եւս չի օգնի։

—Դանիական կրիտիկոս Գէօրգ Բրանդէս, Կոպենհագէնի «Politiken» լրագրում հաղորդելով Հէնրիխ Իբսէնի առողջութեան վիճակի մասին, ասում է, որ նշանաւոր թատերագրողի մահը շատ մօտ է։ Թագաւորի հրամանով նրա առողջութեան վերաբերմամբ օրական երեք անգամ տեղեկութիւններ են հրատարակվում։ Իբսէնին բժշկում են երկրի ամենանշանաւոր բժիշկները։ Այն անհամար հեռագիրների մէջ, որ ստանում է Իբսէնի ընտանիքը աշխարհիս բոլոր ծայրերից, աչքի է ընկնում Վիլհելմ II-ի հեռագիրը, որի մէջ գերմանական կայսրը իր հաւակրութիւնն եւ հիացմունքն է յայտնում նորվեգիական գրողին։

—«Daily Mail»-ին հաղորդում են Կապշտադտից, թէ իրերի դրութիւնը Կապի գաղթականութեան մէջ արագութեամբ մօտենում է վտանգաւոր ճգնաժամի։ Այն ակնյայտնի հաւանականութիւնը, որ ներկայ պայմաններում պատերազմը կը շարունակվի էլի մի տարի, յուսահատութեան մէջ է գցում ազգաբնակութեան մեծամասնութիւնը, որ սպասում է ամենայուրջ բարդութիւնների, եթէ միայն դրութիւնը չը բարւոքվի։ Կապշտադտում յաճախ լուրեր են տարածվում, թէ այն հրդեհը, որ ոչնչացրեց «Colonial Matual Life Assurance» ընկերութեան պահեստներն եւ գրասենեակները եւ որի մասին արդէն տեղեկութիւններ հաղորդեցին հեռագիրները, հրդեհաճիգների գործ էր։ Կասկածում են հօլանդացիներին կամ իրլանդացիներին, որոնք յուսահատութեան են հասած պատերազմի սարսափներից։ Առանձնապէս ամենքի վրա ներգործել է այն մահվան պատիժը, որին ենթարկվեց բօէրական հրամանատար Լոստէր։ «South African News» լրագիրը դադարել է հրատարակվելուց։ Նրա խմբագիրը յայտնեց, թէ այն խստութիւններն եւ սահմանափակումները, որոնց դիմում է այժմ կառավարութիւնը, անհնար են դարձնում լրագրի հրատարակութիւնը։

„ՄՇԱԿԻ“ ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՌՈՒՍԱՑ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆԻՑ

10 հոկտեմբերի

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ։ Հոկտեմբերի 10-ին Պետերբուրգ վերադարձաւ հաղորդակցութեան ճանապարհների մինիստրը։

ՑԱՐԻՑԻՆ։ Հոկտեմբերի 10-ին Ցարիցինի վրայով անցնելով Աստրախանից, հայր Եօան Կրոնշտադտկին պատարագ մատուցեց Վերափոխման տաճարում. աղօթողներ հաւաքվեցին մինչեւ 5000 մարդիկ։

ԱՍԽԱԲԱԴ։ Մէրվում եղած ժամանակ զինուորական մինիստրը այցելեց կալանաւորների տունը, ուր բանտարկեալների թւում կային վեց աւղանացիներ, որոնք կասկածվում էին լրտեսութեան մէջ։ Գարզելով, որ նրանց յանցանքը ապացուցող փաստեր չը կան, զինուորական մինիստրը, «Закаспійское Обозрѣніе» լրագրի խօսքով, յայտնեց նրանց, որ նրանք ազատ են եւ ասաց հետեւեալը. «Աւղանիստանը հաստկված է վշտով,—մեռաւ նրա կառավարիչ Աբդուրահմանը, եւ գահն է բարձրացած նրա որդի Խաբիբուլլան։ Մենք, ռուսներս, առաջ էլ մեզ Աւղանիստանի բարեկամ էինք համարում եւ էլի բարեկամ ենք ուզում մնալ կառավարութեան փոփոխութիւնից յետոյ եւս, այդ պատճառով ազատելով ձեզ, պատուիրում եմ ձեզ ներկայանալ ձեր ամենամերձաւոր իշխանութեանը եւ հաղորդել ձեր լսածը զինուորական մինիստրից»։

ԽՐԻՍՏԻԱՆԱ։ «Վերդէնսգանգ» լրագիրը գրում է. «Նօբելի ժամանակագրությունը կատարեալ լռութիւն է պահում խաղաղութեան պրէմիա տալու հարցի մասին, այնուամենայնիւ կարելի է անկասկածելի համարել, որ պրէմիան կը ստանայ շվէյցարական բժիշկ Հէնրի Դիւնանտ, որի օգտին, լուրերին նայելով, ձայն տուեցին 37 հեղինակաւոր անձինք։ Դիւնանտից յետոյ ամենից շատ ձայն ստացաւ խաղաղութեան յայտնի կողմնակից Ֆրանսիացի Ֆրէդէրիկ Պասսի»։

ՄՕՍԿՎԱ։ Մոսկվայի Նահանգապետի ամուսնուց գեղջկուհի Բօբրովայի ձեռքով գողացված թանգագին քարերի գործը։ Երդուեալ դատաւորները Բօբրովային մեղաւոր ճանաչեցին գողութեան մէջ, իսկ Պետրովին եւ Շէստունովին մեղաւոր ճանաչեցին գողացածները ծածկելու մէջ, բայց երեք հարիւր բուբլուց պակաս գումարի, այնպէս որ բոլորի յանցանքն էլ մեղմացրին։ Բանից երեւաց, որ Բօբրովան բոլոր իրաւունքներից զրկված է եւ գողութեան համար արդէն դատի է ենթարկված եղել ուրիշ անգամ. Պետրովի զրկված է եղել բոլոր իրաւունքներից եւ դատի է ենթարկված եղել վեց անգամ. նա փախստական է Սիբիրից։ Պետրովի պատիժը թողնված է Սիբիրի իշխանութեանը։ Բօբրովա երեք տարվայ բանտարկութեան է դատապարտված եւ ապա պէտք է չորս տարի ոստիկանութեան հսկողութեան տակ գտնվի։ Շէստունովի երեք ամսվայ բանտարկութեան է դատապարտված։

ՍԻՆՏ-ԷՏԻԷՆ։ Մասնաժողովը վճռեց երէկ դիմել կառավարութեան մի գրութեամբ եւ որոշեց յետաձգել գործադուլը, ի նպաստ որի 7 ձայներից ձայն տուեցին չորսը, երկուսը հակառակ ձայն տուեցին եւ մէկը ձեռնպահ մնաց։

11 հոկտեմբերի

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ։ Պետական քարտուղար Գլէվէ, վերադառնալով արձակուրդից, ստանձնեց իր պաշտօնը։

ԲԵՐԼԻՆ։ Երեկոյեան 11 ժամին վախճանվեց ըէյխստագի անդամ Սիմանս, գերմանական բանկի նախկին դիրեկտորը։

Կ. ՊՕԼԻՍ։ Հոկտեմբերի 16-ին, սուլթանի պատուաւոր նախագահութեամբ եւ Հալէպի նախկին նահանգապետ Բաֆֆ փաշայի ղեկավարութեամբ կայացաւ մի ժամանաժողովի նիստ ֆինանսական վարչութեան դրութիւնը քննելու համար։

ՄՕՍԿՎԱ։ Գաւառական զէմստվոյի ժողովը որոշեց միջնորդութիւն յարուցանել այն մասին, որ Մոսկվայի գաւառական զէմստվոյին, նրա բարդ անտեսութիւնն եւ բազմաթիւ հարցերի ծագումն ի նկատ առնելով, թոյլ տրվի, իբրեւ բացառութիւն, բացվել եւ փակվել օրէնքով սահմանված ժամանակից ուշ։

ՓԱՐԻԶ։ Պահպանողական մամուլի օրգանները, որոնք քիչ ժամանակ առաջ, շնորհիւ կուսակցական հայեացքների, կարծիք էին յայտնում Ռուսաստանի հետ կապված դաշնադրութեան դէմ, փոխում են իրանց տօնը՝ ի նկատ առնելով այն ժողովրդական ոգեւորութիւնը, որ երեւաց ամբողջ Ֆրանսիայում Ռուսաց Կայսերական Զոյգի այցելութեան առիթով։ Այսպէս՝ արքայական «Soleil» լրագրից յետոյ, բօնապարտիստների օրգան «Autorité», խմբագիր Կասանեակի ստորագրութեամբ, այսօր տպագրել է մի յօդուած «Ֆրանսիա եւ Ռուսաստան» վերնագրով, որի մէջ այդ նշանաւոր գրողը եւ պատգամաւորը հետեւեալ կարծիքն է յայտնում. «Այժմ, ինչպէս եւ առաջ, մենք մնում ենք ջերմ կուսակիցներ Ռուսաստանի հետ կապած դաշնադրութեան եւ յայտնում ենք, որ այդ դաշնադրութեան քանդումը Ֆրանսիայի համար մի մեծ դժբախտութիւն կը լինէր։ Միայն այս դաշնակցութիւնը,—կրկնում ենք էլի մի անգամ,—կարող է ազատել Ֆրանսիան նրա համար վտանգաւոր առանձնութիւնից, եւ նա արդէն օգնել է մեզ ընդլայնելու մեր գաղթականական քաղաքականութիւնը»։

Թէպէտ եւ ֆրանկօ-թիւրքական տարաձայնութիւնների հարցում փոփոխութիւններ տեղի չեն ունեցել, այնուամենայնիւ դիպլօմատիական շրջաններում յոյս ունեն, որ հարցը կարելի կը լինի կարգաւորել, առանց դիմելու ծովային ցոյցի։

Խմբագիր՝ ԱԼԵՔՍԱՆԴՐ ՔԱԼԱՆԹԱՐ

Հրատարակիչներ՝ ԹԱԳՈՒՀԻ ՏԻԳՐԱՆԵԱՆ

ԻՍԱՀԱԿ ՄԷԼԻՔ-ԱՂԱՄԱԼԵԱՆ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Պետերբուրգի բժշկական վարչութեան թոյլտւութեամբ։ Մեծ սրվակը 5 րուբլի, փոքրը—3 ր. եւ 1 ր. 50 կ.։

ՆՈՐ ՄԻՋՈՑ

մազերը բուսցնելու եւ ամրացնելու համար, ոչնչացնում է թեփը։ Դուրս է եկել նաեւ բոլորովին նոր միջոց

ՁՈՒԻ ԿԱԹԸ

երեսին քնքշութիւն եւ սպիտակութիւն տալու համար, ոչնչացնում է արեւի պատճառած սեւութիւնը, ճռիները, տալիս է կաշուին քնքշութիւն եւ սպիտակութիւն։ Այդ գները չափաւոր են. մեծ տուփը, սրվակի մէջ, 2 րուբլի, փոքրը—1 ր. 50 կ. Ծախվում են բոլոր պարֆիւմերական եւ դեղավաճառական խանութներում։ Գլխաւոր պահեստը գտնվում է Պետերբուրգում, Պուշկինսկայա փողոց տ. № 15, բնակարան № 12. պահեստի բաժանմունքները գտնվում են. Թիֆլիսում կովկասեան դեղատան ապրանքների վաճառման ընկերութեան խանութում՝ Երեւանեան հրապարակ եւ նրա բաժանմունքում, Միքայէլեան փողոց եւ Բագւում. նաեւ Միքայէլեան կամուրջի վրա, Գալպօվի եւ Արիստակօվի դեղատներում։ Օտարաքաղաքացիների պատուէրները կատարվում են անմիջապէս՝ պօստով։ 81—100

ԵՐԿՐԱՉԱՓ-ԻՆԺԵՆԷՐ

Ս. ԲԱՀԱԹՐԵԱՆ

Ընդունում է երկրաչափական եւ հարթաչափական (нивеллировочныя) եւ այլ տեսակ գեօդէզիական աշխատութիւններ՝ ջուր մատակարարելու, կանալիզացիայի, ոռոգման, ճահիճներ ցամաքացնելու, անտառների բարեկարգութեան, լեռնային գործի, ճանապարհների եւ փողոցների շինութեան եւ կանոնաւորութեան, քաղաքային եւ այլ անշարժ կալուածքների կարգաւորութեան յատակագծի վրա գընահատական (оцѣночный сборъ) տուրքի համար, քաղաքային եւ այլ հողերի որոշումը, քաղաքային յատակագծի հաստատելը օրէնսդրական կարգով եւ այլն։

ԲԱԳՈՒ, «Դվօրցօվայա Նօմէրներ» հիւրանոց. կամ Թիֆլիս՝ Ավճալեան փողոց, Շահբուդաղեանի տուն, № 59, բակում։ 11—100

ՎՐԱՑ ԱԶՆՈՒԱԿԱՆՆԵՐԻ ԹԱՏՐՈՆ

Կիրակի, հոկտեմբերի 14-ին

Հայ դերասանական դրամատիկ ընկերութիւնը

Մասնակցութեամբ Տ. ՍԻՐԱՆՈՅՇԻ

կը ներկայացնէ

ԹԱԳԻ ՀԱՄԱՐ

Դրամա 5 արար., հեղ. Ֆ. Կօպպէի, թարգ. Մ. Մանուէլեանի

Մասնակցում են 60 անձինք եւ երաժշտական խումբը

Սկիզբը ճիշդ ժամը 8-ին։

Տեղերի գները սովորական են։ 1—3

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

ԹԻՖԼԻՍԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆԸ

յայտնում է ի գիտութիւն ընդհանուրի, որ այս տարվայ սեպտեմբերի 23-ին գողացված են, քաղաքային դրամարկղը կոտրելով, առձեռն դրամ եւ հետեւեալ տոկոսաբեր թղթերը.

I. Պետական 1000 րուբլիանոց ընտայի 4%-աբեր չորս հատ արժէթղթեր, որոնց №№ են 1) սէրիա՝ 36, № 2175, 2) սէրիա՝ 81 № 2603, 3) սէրիա՝ 185, № 0212, 4) սէրիա՝ 209։ № 4183 եւ մի արժեթուղթ նոյն ընտայի 100 րուբլու արժողութեամբ, սէրիա՝ 187, № 0881։

Բոլոր հինգ արժեթղթերն էլ ունեն 1901 թւի դեկտեմբերի 1-ի կուպօնները։

II. Թիֆլիս քաղաքի 3-րդ փոխառութեան 1000 րուբլիանոց, դեռ եւս բէալիզացիայի չենթարկված, օբլիգացիաներ, իւրաքանչիւրը 1901 թւի դեկտեմբերի 1-ի կուպօններով՝ հետեւեալ №№-ով.

155-ից մինչեւ 159,
164 » » 346,
348 » » 457,
459 » » 581,
583 » » 750,

Ընդամենը 592 թերթ։

Այդ թերթերի վրա դեռ եւս համարներ, ըստ կարգի, եւ հաշւապահի ստորագրութիւնը չը կան։ 2—3

ՏՆԱՅԻՆ ՃԱՇ

Հոկտեմբերի 1-ից, Բագւում (Զադրօվայա եւ Վօրօնցօվսկայա փողոցների անկիւնում, տ. Մալաֆէևվի) բացվում է

ՆՈՐ ԽՈՀԱՆՈՑ

յատկապէս տնային ճաշ պատրաստելու համար։—Կը պատրաստվին թէ եւրօպական եւ թէ մանաւանդ հայկական մաքուր, համեղ կերակուրներ, իսկ գները լինելու են համեմատաբար էժան, քան թէ հիւրանոցներում։ Ցանկացողներին կուղարկվի տները՝ մեր ծառայով եւ բոլոր յարմարութիւններով։ Ամսով ճաշողները կիրակի օրերին կը ստանան քաղցրեղէն ձրի։ Կընդունվին նաեւ առանձին պատուէրներ։ 3—6

ՊԱՀԱՆՋԵՑԷՔ ԱՄԵՆ ՏԵՂ

ԻՍԿԱԿԱՆ

„ՕԴՕՐԻՆ" Մ. Վ. ԼԵԲԵԴԵՎԻ

դեղը ոչնչացնում է կատարելապէս մի քանի օրում հնացած կոշտերը (մազօլները) եւ ետնգները արմատով, միայն կառավարութեան հաստատած էտիկէտով № 22473.

Ծախվում է Թիֆլիսում, Դեղատան Ապրանքների Առեւտրի Կովկասեան Ընկերութեան մէջ եւ Բագուի եւ Բաթումի բաժանմունքներում։ 4—10

ԱՄԵՆԱԼԱՒ ԿԱՐԻ ՄԵՔԵՆԱՆԵՐ

Կարում են առանց որեւէ աղմուկի, դէպի երկու կողմը եւս, առաջ եւ յետ, ծախվում են հինգ տարվայ երաշխաւորութեամբ Վ. ՌԷՇԻ նոր բացված խանութում, Պեսկօվսկայա փող., № 76։ 6—6

Հրատարակիչներին եւ Հեղինակներին

ՍՏԵՓԱՆԵԱՆԻ

ՆՈՐ ԲԱՑԱԾ

ԱՐԱԳԱՏԻՊ ՏՊԱՐԱՆԸ

Ընդունում է տպարանական ամեն տեսակ պատուէրներ։ Ստացված են մեծ քանակութեամբ հայերէն եւ ռուսերէն եւ մասամբ էլ ֆրանսերէն նորագոյն ձեւի տառեր եւ գեղեցիկ զարդաբանքներ։

Տպագրութեան պայմանները շատ ձեռնտու են, որոնք առանձին կը յայտնվեն ցանկացողներին։

Տպարանի հասցէն՝ Александрополь, Скоропечатня Степаняна. 1—5

ՇՈՒՏՈՎ ԼՈՅՍ ԿԸ ՏԵՍՆԻ

„ՍՈՒՐԱԿ ՀԱՅԱՍՏԱՆԻ"

Ազգային լիակատար երգարանի առաջին հատորը՝ հինգերորդ տպագրութեամբ։ Սոյն հատորի մէջ տպագրվում են, բացի բոլոր գործածական երգերից, նոյնպէս եւ նոր երգեր, եւ բանաստեղծութիւններ, թւով 300-ից աւելի։ Չը նայելով գրքի մեծութեանը, նրա իւրաքանչիւր օրինակի գինը,—ամենքին մատչելի դարձնելու համար,—նշանակում ենք մի րուբլի, կանխիկ վճարելով։ Ցանկացողները դիմում են ԲԱԳՈՒ, «Սոխակի» հրատարակչին, սոյն հասցէով. Протоіерею Григорію Григоріанцъ, БАКУ. 4—5

ՊՐԷՅՍ-ԿՈՒՐԱՆՏ

Երկրագործական մեքենաների եւ գործիքների

որոնք պատրաստվում են ԻՆԺԵՆԷՐ ՊԱՍՍԷԿԻ մեքենագործական եւ ձուլարանական գործարանում Բաթումում։

Գներ՝ անուցիչով եւ կօնտէնսէրով

25 սղոցով	300 րուբլի
35 »	425 »
50 »	550 »
60 »	600 »
80 »	700 »
Թեղիչներ	50 »
Բաժանարարներ (սօրտիրօվկա) . . .	70 »
Պրէսներ խոտի եւ բամբակի համար . .	150 »

Գութաններ զանազան սիստեմների՝ մէկ պուդին 5 ր. 50 կ.

Վերոյիշեալ մեքենաների նմուշները ցուցադրված են Կովկասեան յոբելեանական ցուցահանդէսի մեքենաների եւ գործիքների բաժանմունքում, որտեղ եւ կարելի է նրանց տեսնել եւ փորձել։

Մի եւ նոյն ժամանակ հեշտ է համոզվել, որ նշանակած գները բոլորովին մատչելի են եւ որ այդ մեքենաները, որոնք պատրաստված են լաւ ապրանքից հմուտ կերպով եւ ամուր, նշանաւոր չափով էժան են, ինչպէս ռուսաց, այնպէս էլ արտասահմանեան գործարաններում պատրաստվածներից։

Երեւանի նահանգի համար ներկայացուցիչ նշանակված է ՄԵԽԱՆԻԿ ՌԱՖԱՅԷԼ ՄԱՐԳԱՐԵԱՆ" ԼՈՒՍԻՆԵԱՆ ԷՋՄԻԱԾՆԻ ԳԱՒԱՌԻ ՍԱՄԱՂԱՐԻ ԳԻՒՂԻՑ։ 5—6



Կօնֆէտի եւ Շօկօլադի գործարան

„Փ. Ն. ՓՐԻԴՕՆԵԱՆ"

ԹԻՖԼԻՍՈՒՄ

Առաջարկում է թարմ կարամէլ մրգէղէնից, մօնպանսէ, մարմելադ, պաստիլա, զէֆիր եւ այլն։

Պատուէրներով դիմել գործարան. Պավլօվսկայա փողոց, սեփական տուն, տելէֆօն № 362.

Սեփական գործարանական խանութը գտնվում է Մէյդանում, եղբ. Հէջուբեանների տանը, տելէֆօն № 772.

Մեր ապրանքները ծախվում են բոլոր կօլօնիական խանութներում։

Բագուի եւ Բագուի գաւառի համար ներկայացուցիչ է Նիկ. Սամարչեանց, Միքայէլեան փող., տ. Աշումեանի։ 66—100

Խնդրեմ ուշադրութիւն դարձէք

Ստացված է մեծ քանակութեամբ ամեն տեսակ պատրաստի սպիտակեղէն՝ կանանց եւ տղամարդկանց, ֆուֆայկաներ, չուլկիներ, նասկիներ, ձեռնոցներ, մետաքսի կէօնկաներ սեղանի համար, նոյնպէս բաւթաներ, ղայթաններ՝ սեփական գործարանում պատրաստված, կանանց գլխի սարքեր, այսինքն հաչիաներ, չիքիլաներ, մետաքսէ պլուտներ եւ այլն։

Թիֆլիսի բաժանմունք Բագւում։—Պարապետ։

ԵՂԲ. ՄԷԼԻՔ-ՄԱՐՈՒԹԵԱՆՑ

Թիֆլիսի Նախկին Հայոց Հրատարակչական ընկերութեան գրքերի պահեստը Թիֆլիսում յանձնված է Կենտրոնական գրավաճառանոցին,

ուր պէտք է դիմեն ցանկացողները։ Գրավաճառներին եւ գումարով գնողներին զիջումն է լինում։

Դիմել՝ Тифлисъ, въ Центральную Книжную торговлю. 4—10

Позволено цензурою, Тифлисъ, 11 Октября 1901 г.

Электропечатня Грузин. Изд. Т—ва, Б.-Банкская ул.